ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2025թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՐԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 1-ին ենթակետով, 56-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2807-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի հասարակական և մշակութային կյանքում ներդրած նշանակալի ավանդի համար լրագրող, մանկավարժ, հասարակական և մշակութային գործիչ Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՐԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարկ Գրիգորյանը ծնվել է 1958 թվականի մայիսի 3-ին, Երևանում:

1965-1975թթ. միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 78 դպրոցում:

1980 թվականին, ավարտելով Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը, աշխատանքի է անցել Երևանի կառավարման գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում (ՔԿԱՀԵԳՆԻ)՝ որպես կրտսեր գիտաշխատող: Զբաղվել է արհեստական բանականության լեզվաբանական խնդիրներով, առաջին հերթին այն խնդիրներով, որոնք առնչվում էին Երևանի քաղաքապետարանի աշխատանքի հետ:

1984թ. այդ խնդիրներից մի քանիսի լուծումը գտնելու տեսական հիմնավորման, ինչպես նաև գիտական որակավորումը բարձրացնելու նպատակով, ընդունվել է Մոսկվայի ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ռուսաց լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան (հեռակա): Ավարտել է 1988թ., կես տարի անց պաշտպանել թեկնածուական թեզ՝ «Կառավարող փաստաթղթերի տեքստի քերականությունն ու շարահյուսությունը» թեմայով: Ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

1987թ. համատեղության կարգով աշխատել է Երևանի Ա.Ս.Պուշկինի անվան դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ:

1990թ. ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր:

1992թ. զուգահեռաբար աշխատել է Երևանի պետական համալսարանում, որպես դոցենտ՝ ռուսաց լեզու դասավանդելով հումանիտար ֆակուլտետներում, իսկ 1994թ.՝ նաև «Անանիա Շիրակացի» համալսարանում:

Մասնագիտական լրագրությամբ զբաղվել է 1993 թվականից՝ որպես Երևանում «Սվոբոդա» թերթի խմբագրի տեղակալ: 1995-1996 թվականներին աշխատել է AIM (Armenian International Magazine) ամսագրում՝ որպես երևանյան թղթակից, այնուհետև՝ «Թիմ» հասարակական կազմակերպությունում՝ որպես տնօրեն:

1998թ. գլխավորել է «Համագործակցություն և ժողովրդավարություն» հասարակական կազմակերպությունը:

Համագործակցել է Հայաստանի և արտերկրի բազմաթիվ հրատարակությունների հետ: Երևանում «Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ»-ի (ներկայիս «Կովկաս» ինստիտուտ) հիմնադիրներից մեկն է:

Աշխատել է Լոնդոնում, BBC-ի ռուսական ծառայության «Վաղ ժամ» ծրագրում: Մինչ 2011 թվականի մարտի 11-ը Սևա Նովգորոդցևի հետ վարել է «Բիբիսևա» ծրագիրը:

2015-2017թթ. նա հեղինակել և վարել է «Անծանոթ Երևան» հաղորդաշարը: Այդ տարիների ընթացքում նա պատմել է Երևանի պատմության, զարգացման ընթացքի

մասին, ինչպես նաև ներկայացրել մայրաքաղաքի ճանաչման համար մեծ նշանակություն ունեցող շենքերը, դրանց հեղինակներին, այդ շենքերի հետ անմիջական առնչություն ունեցող մարդկանց:

2017-2018թթ. ղեկավարել է Հայաստանի հանրային ռադիոընկերությունը և հենց այդ ընթացքում էլ, ի թիվս այլ նախագծերի, վարել է ռադիոհաղորդում՝ նվիրված Երևանին:

2019-2023թթ. եղել է Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի տնօրենը, 2023-2024թթ.՝ տնօրենի պաշտոնակատարը:

Մարկ Գրիգորյանը «Երևան. քաղաքի կենսագրությունը» ծավալուն աշխատության և «Երևանը քարտեզներում՝ 17-21-րդ դարերում» գրքի հեղինակն է:

Տպագրել է տասնյակ հոդվածներ, վարել բազմաթիվ հարցազրույցներ, որոնց ընթացքում խոսվել է Երևանի ճարտարապետության և զարգացման խնդիրների և հեռանկարների մասին:

Մարկ Գրիգորյանի նվիրվածությունը Երևանին ունի ժառանգական բնույթ: Նրա պապը՝ ճարտարապետ Մարկ Գրիգորյանը, եղել է Երևանի երկրորդ գլխավոր ճարտարապետը, ղեկավարել է 1949թ. գլխավոր հատակագծի ստեղծման աշխատանքները և կառուցել է քաղաքը զարդարող բազմաթիվ շենքեր, այդ թվում՝ Մատենադարանը, Ազգային ժողովը, Նախագահի նստավայրը, Սահմանադրական դատարանը, Հանրապետության հրապարակի հինգ շենքերից երեքը, թանգարաններ, բնակելի և հասարակական նշանակության շենքեր:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով լրագրող, մանկավարժ, հասարակական և մշակութային գործիչ Մարկ Գրիգորյանի ներդրած նշանակալի ավանդը Երևան քաղաքի հասարակական և մշակութային կյանքում՝ առաջարկվում է Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ